

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀՈՎՏԱՍԵՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 Թ ԱՌԱՋԻՆ  
ԿԻՍԱՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Հովտամեջ համայնքի հարգելի բնակիչներ, հյուրեր, պարոն Ա. Այվազյան, այսօր Ձեր քննարկմանն ենք ներկայացնում Հովտամեջի գյուղական համայնքի ղեկավարի, ավագանու, գյուղապետարանի աշխատակազմի 2015թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը կատարած աշխատանքները:

Գյուղապետարանը իր գործունեությունն իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Գյուղն ունի 251 տնտեսություն, 1462 բնակչություն, 912 ընտրող, 267 հա ընդհանուր, հողատարածություն, 215 գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողեր, որից՝ 153 հա վարելահող, 55 հա տնամերձ հողամաս 7 հա համայնքային սեփականության հողեր:

2015թ. գարնանը մշակվել է 207 հա, անցյալ տարվա համեմատ ավել է մշակվել 11 հա չի մշակվել 8 հա: Չմշակելու հիմնական պատճառներն են՝ սեփականատերերը բացակայում են, սեփականատերերը միջոցներ չունեն, ունեն սերմացուի և իրացման խնդիր:

Գյուղում հիմնականում մշակում են կարտոֆիլ, ցորեն և կաղամբ:

**Ըստ բնագավառների կատարվել են՝**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումները: Գույքահարկի գանձումը կիսամյակային պլանով նախատեսվել է 1450,0 հ.դ, փաստացի կատարվել է 720,0 հ.դ., այսինքն 49,6%: Հողի հարկը կիսամյակում նախատեսված է 1000,0 հ.դ., փաստացի կատարվել է 722,3 հ.դ., այսինքն 72,2 %:

Տեղական տուրքերի և վճարների մասով՝ նախատեսվել է 50,0 հ.դ., փաստացի կատարվել է 16,0 հ.դ., այսինքն 32%-ով:

Պետության կողմից ստացված դոտացիան կատարվել է 100%: Կիսամյակային կատարողականը՝ 91,9 %:

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Հովտամեջի միջնակարգ դպրոցի նախակրթարանի 1 ուսուցիչի աշխատվարձ է վճարվել 434,8 հ.դ.:

Շրջանավարտների համար կազմակերպվել է միջոցառում դպրոցը ավարտելու կապակությամբ ծախսվել է 100,0 հազ դրամ:

Համայնքը ունի գրադարան 5476 կտոր գրականությունով, որը շատ լավ պահպանված է: Գրադարանից օգտվում են 28 ընթերցող, որոնք հիմնականում դպրոցականներ և ուսանողներ են:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Ժամանակին էջմիածնի զինկոմիսարիատ ենք ներկայացրել համայնքի կցագրման ենթակա պատանիներ: Մայիսի 9-ի կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում, ծախսվել է 150, 0 հազ, դրամ իսկ Արցախյան պատերազմի 25 մասնակիցների տրվել է օգնություն 500.0 հ.դ յուրաքանչյուրին 20.0 հ.դ.:

Զոհված ազատամարտիկների 3 ընտանիքների տրվել է օգնություն 90.0 հ.դ. յուրաքանչյուրին

30.0 հ.դ., ծաղկեպսակներ է դրվել Հայրենական պատերազմի և Արցախյան շարժման գոհված ազատամարտիկների հուշարձանին:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Մարտի 8-ի կապակցությամբ համայնքում բնակվող 65 տարեկանը լրացած 70 կանանց տրվել է նվերներ, որի համար ծախսվել է 325,5 հազ. դրամ:

Սոցիալապես անապահով 4 ընտանիքի որպես օգնություն տրվել է 310,0 հ.դ.:

Համայնքում նոր ծնված 3 երեխաների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 90,0 Ն.՝ ՍձձճճՆ՝ՅՁՍձձճՅՅ 30.0 Ն.՝: Համայնքում նոր կազմավորված մեկ ընտանիք ստացել է 30.0 հ.դ. օգնություն:

Համայնքի 4 բնակիչների տրվել է խրախուսանք 120,0 հ.դ., յուրաքանչյուրին 30,0 հ.դ., զինավարժություններին մասնակցելու համար: Համայնքի բնակիչ մեկ զինակոչիկի ԴՕՍԱԱՖ-ի դասերին մասնակցելու համար տրամադրվել է 15,0 հ.դ. ճանապարհածախս: Համայնքում հարազատը կորցրած 3 ընտանիքների հարազատների տրվել է դրամական օգնություն 90,0 հ.դ. յուրաքանչյուրին 30.0 հ.դ. և ծաղկեպսակներ է դրվել մահացածների շիրիմներին:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Հունվարի առաջին տասնօրյակում կազմակերպվել է անասնազիխաքանակի համատարած հաշվառման աշխատանքներ և արդյունքները ներկայացվել է վիճակագրական ծառայություն: Հաշվառվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքերի հուլիսյան հաշվետվության 4 ԳՏ ծևը: Վերանորոգվել և մաքրվել է ոռոգման ներտնտեսային ցանցի ջրամատակարարումը, որը ապահովում է տնամերձ հողամասերի ոռոգումը: Ներկա պահին համայնքում կատարվում են ցորենի ել կարտոֆիլի բերքահավաք:

**ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Գարնանը մաքրվել է գյուղամիջյան ճանապարհի երկու կողմի առուները: Համայնքի մի քանի փողոցներում՝ Թումանյան, Նալբանդյան, Շահումյան, Սևակի կատարվել են մաքրման և բարեկարգման աշխատանքներ՝ կատարվել է մասնակի խճապատում, որի համար ծախսվել է 670,0 հ.դ.:

Կատարվում է աղբահանություն շաբաթը մեկ անգամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Խմելու ջրագծերի վերանորոգում
2. Էլեկտրոլարերի մաշվածություն



Ա. ՍԱՐԳՍՅԱՆ